Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2012 թվականին քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2012 թվականին քաղաքացիներից ստացվել է 2431 նամակ, որից 2387-ը՝ աջակցության խնդրանքով, 17-ը՝ բողոք, 13-ը՝ առաջարկություն, 14-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 139 դիմումներից 128-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 14 դիմումներից 11-ին տրվել է դրական լուծում կամ, գործող կարգի համաձայն, ներկայացվել է ՀՀ կառավարություն: Աշխատանքի տեղավորման և հաշվառման մասին 142 դիմումներից դրական լուծում է ստացել 44-ը, 65 դիմումների վերաբերյալ մարզպետի կողմից միջնորդություններ են ներկայացվել համապատասխան կազմակերպություններ՝ աշխատանքի տեղավորման հարցում օժանդակելու նպատակով, մյուսները՝ հաշվառվել են:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 73 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 1179 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 722 քաղաքացիների: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 354 քաղաքացիներից բավարարվել է 302-ի խնդրանքը, 53 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 53 հոգու՝ առողջարանային բուժման ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2012 թվականին կատարվել է 599 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են քաղաքացիների արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ

/2012թ./

1. Ստացվել են նամակներ ընդամենը - 2431

որից՝

աջակցություն	2387
առաջարկություն	13
հարցում	14
բողոք	17
այդ թվում՝	
կրկնակի	14
կոլեկտիվ	16

3. Ըստ հարցի բնույթի՝

բնակարանային	39
կոմունալ-կենցաղային	69
շինարարական	32
արդձեռ/տրանսկապ/	7
գյուղատնտեսական	12
բնութ. պահպանութ.	2
առևտրի	2
կենսաթոշակի և նպաստի1	19
առողջապահության	502
կրթական և մանկ.հիմն	239
գիտութ.կուլտուրա	12
ֆինանսական	1179
օրենսդրական	3
քաղ. և որդեգրման	12
աշխ.տեղ և հաշվառման	142
հողհատկացում և հողօգտ.	14
ապարատային	77
այլ հարցեր	69